25
ՍԵՊՏԵՄԲԵՐ
2020

Luys Lnyu®



ՍԵՑԵՍԻԱՆԵՐԻ ՀԱՋՈՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԵՑԵՍԻԱՆԵՐԻ ՀԱՋՈՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Տիգրան Թորոսյան, Արաքս Վարդանյան
Հեռանկարային հետազոտությունների
և նախաձեռնությունների կենտրոն

ՆԱԽԱԲԱՆ

Երկու կոմունիստական միությունների՝ ԽՍՀՄ–ի և Հարավսլավիայի փլուզումից հետո, անկախություն հռչակեցին ինչպես անմիջապես միջազգային լիարժեք ճանաչում ստացած պետությունները (նախկին միութենական հանրապետությունները), այնպես էլ այն պետությունները, որոնք մինչ այդ մտնում էին միութենական հանրապետությունների կազմի մեջ, և, մեծամասամբ, ունեին ինքնավար վարչական կազմավորումների կարգավիճակ: Հետագայում այդ սեցեսիաները բաժանվեցին երկու խմբի. դրանցից առաջինը (Սերբական Կրաինա, Աջարիա, Գագաուզիա, Չեչնիա) «վերադարձան» մետրոպոլիաների կազմի մեջ, իսկ մնացածը (Կոսովոն, Աբխազիան, Լեռնային Ղարաբաղը, Մերձդնեստրը, Հարավային Օսիան) քառորդ դարից ավելի շարունակում են պահպանել դե ֆակտո անկախ կարգավիճակ: Թեև վերջին տասնամյակների ընթացքում միջազգային իրավունքը լիարժեք իրավական հիմք է ստեղծել էթնոքաղաքական հակամարտությունների լուծման համար, և միջազգային կազմակերպությունները կատարում են խաղաղապահ միջնորդական առաքելություններ, սակայն էթնոքաղաքական հակամարտությունների թիվը շարունակում է աճել: Ստոկհոլմի Միջազգային համալսարանում անցկացված հետազոտությունների համաձայն՝ 2007 թվականին մոլորակի տարբեր մասերում իրականացվել են 61 խաղաղապահ գործողություններ, որոնք ուղղված են եղել հակամարտությունների ակտիվության նվազեցմանը, ինչը 1999 թվականից հետո ամենաբարձր ցուցանիշն է[1]: Այդ հակամարտությունները միմյանցից տարբերվում են քաղաքական, իրավական, տնտեսական, պատմական, էթնոմշակութային կամ այլ

[1] Soder. K. 2008. Multilateral Peace Operations in 2007. *Appendix 3A/SIPRI Yearbook 2008. Armaments, Disarmament and International Security*. Stockholm. P. 113-148.

առանձնահատկություններով, որոնց ազդեցությամբ կարող են զգալիորեն տարբերվել նաև դրանց լուծման գործընթացները: Չնայած այս ընթացքում միջազգային հանրությունը սկզբունքորեն չի փոխել իր վերաբերմունքը դրանց ճանաչման նկատմամբ, այնուամենայնիվ, առանձին ասպեկտներով կարելի է նկատել որոշակի փոփոխություններ դե ֆակտո պետությունների նկատմամբ: Դա հատկապես նկատելի է այդ կազմավորումներում տեղի ունեցող գործընթացներին նվիրված գիտական հետազոտությունների մոտեցումներում: Սկզբում տեղի ունեցավ այդ պետությունները բնութագրող տերմինների վերանայում: Եթե առաջին տարիներին հետազոտողներն այդ պետություններն անվանում էին «կեղծ պետություններ» (pseudo-states)[2] կամ «քվազիպետություններ» (quasi-states)[3], ապա հետագայում նրանց նկատմամբ սկսեցին կիրառել չեզոք տերմինաբանություն՝ «դե ֆակտո պետություններ» (de facto states)[4]: Փոփոխություններ են տեղի ունեցել նաև հետազոտական խնդրի դրվածքի ձևակերպման մեջ: Եթե առաջին 10-15 տարիների ընթացքում այդ պետությունների էմպիրիկ ուսումնասիրությունները հիմնականում կենտրոնացած էին հակամարտությունների ծագման կամ դրանց լուծման խնդիրների վրա[5], ապա վերջին

[2] Kolossov V. and O'Loughlin J.1999. Pseudo-states as harbingers of a new geopolitics: The example of the Trans-Dniester Moldovan Republic (TMR). *Boundaries, Territory and Postmodernity*, David Newman, ed. Frank Cass: London.

[3] Kolstø, P. 2006. The sustainability and future of unrecognized quasi-states. *Journal of Peace Research*. Vol. 43. No. 6. P. 723–740. DOI: https://doi.org/10.1177/0022343306068102; Kolstø, P., and H. Blakkisrud. 2008. Living with non-recognition: State- and nation-building in the South Caucasian quasi states. *Europe–Asia Studies*. Vol. 60. No. 3. P. 483–509. DOI: https://doi.org/10.1080/09668130801948158

[4] Bakke K.M., Linke A.M., O'Loughlin J. and Toal G. 2018. Dynamics of state-building after war: External-internal relations in Eurasian de facto states. *Political Geography*. No. 63. P. 159-173. DOI: http://dx.doi.org/10.1016/j.polgeo.2017.06.011; Blakkisrud H. and P. Kolstø. 2012. Dynamics of de facto statehood: the South Caucasian de facto states between secession and sovereignty. *Southeast European and Black Sea Studies*, 12:2, 281-298, DOI: http://dx.doi.org/10.1080/14683857.2012.686013.

[5] Kolstø, P. and A. Malgin. 1998. The Transnistrian Republic: A case of politicized regionalism. *Nationalities Papers*. Vol. 26. No. 1. P. 103–128. DOI: https://doi.org/10.1080/00905999808408553; Kolossov V. and O'Loughlin J.1999; King C. 2001. The benefits of ethnic war: Understanding Eurasia's unrecognized states. *World Politics*. Vol. 53. No. 3. P. 524–52. DOI: https://doi.org/10.1353/wp.2001.0017 ; Pegg S. 1998. *International society and the de facto state*. Aldershot: Ashgate; Wolker E. 1998. *No Peace, No War in the Caucasus: Secessionist Conflicts in Chechnya, Abkhazia and Nagorno-Karabakh*, Occasional Paper, Belfer Center for Science and International Affairs, 1998. Available at http://belfercenter.ksg.harvard.edu/ publication/3042/no_peace_no_war_ in_the_caucasus.html; Torosyan T. 2010. *Conflict Resolution in the Framework of the International Law. Case of Nagorno- Karabakh*. Tigran Mets.Yerevan; Lynch D. 2004. *Engaging Eurasia's separatist states: Unresolved conflicts and de facto states*. Washington, DC: United States Institute of Peace Press; Торосян Т. 2007. Мнимое противоречие. *Россия в глобальной политике*. Т. 5, № 4. С. 203-214. https://globalaffairs.ru/number/n_9224

տարիներին ուշադրության են արժանանում սոցիալ-քաղաքական գործընթացները[6]: Հետազոտության դիտանկյան փոփոխությունը տեղի է ունեցել երկու գործոնների ազդեցության ներքո. այդ պետական կազմավորումները անցած ժամանակահատվածում դարձել են իրականության անժխտելի իրողություն և տարածաշրջանային միտումների ու նոր աշխարհակարգի ձևավորման գործընթացի անբաժանելի մաս[7]:

Որպես այդ հետազոտությունների գործիքակազմ բավական հաճախ կիրառվում են համեմատական վերլուծության միջոցները: Այդ հետազոտությունների մոդելավորումը լուրջ դժվարությունների հետ է կապված, ինչը պայմանավորված է հակամարտությունների բազմազանությամբ և ուսումնասիրվող տարբեր գործոնների (փոփոխականների) մեծ թվով, որոնք բնութագրում են այդ հակամարտությունները տարբեր ասպեկտներով: Խնդիրն ավելի է բարդացել 2007-2008 թվականների աշխարհաքաղաքական գործընթացների սրվելուց հետո, քանի որ էթնոքաղաքական հակամարտությունները դարձել են ժամանակակից աշխարհակարգի փոխակերպումների առանցքային համակարգային գործոններից մեկը[8]: Նման բարդ գործընթացների արդյունավետ ուսումնասիրության համար պահանջվում է հետազոտությունների հայեցակարգի ընդլայնում՝ միջգիտակարգային մոտեցման կիրառման հիման վրա՝ հաշվի առնելով ոչ միայն քաղաքական և էթնիկական գործոնները, այլև իրավական և աշխարհաքաղաքական գործոնները: Դա կօգնի ավելի ճշգրիտ որոշել հակամարտությունների հետագծերի և դրանց կարգավորման գործընթացների տարբերությունները, բարձրացնել հետազոտությունների արդյունքների հավաստիությունը, հետևաբար՝ նաև կարգավորման գործընթացների արդյունավետությունը:

---

[6] [Bakke, Linke, O'Loughlin and Toal 2018] Popescu N. 2006. *Democracy in secessionism: Transnistria and Abkhazia's domestic politics*. Budapest: Central European University/Open Society Institute. http://pdc.ceu.hu/archive/00003121/01/popescu_f3.pdf; Blakkisrud H. and P. Kolstø. 2011. From secessionist conflict towards functioning state: Processes of state- and nation-building in Transnistria. *Post-Soviet Affairs*. Vol. 27. No. 2. P. 178–210. DOI: 10.2747/1060-586X.27.2.178; Blakkisrud and Kolstø 2012; Caspersen N. 2012. *Unrecognized states*. Cambridge: Polity Press; Caspersen N. 2012. *Unrecognized states*. Cambridge: Polity Press; Bakke, Linke, O'Loughlin and Toal 2018; Мелешкина Е.Ю., Кудряшова И.В. 2015. Сецессии на постимперском пространстве: Косово, Абхазия, Южная Осетия. *Актуальные проблемы Европы*. № 1. с. 56–80; Фомин И. В. 2016. Перформативы сецессии оспариваемых государств: Южная Осетия, Абхазия, Косово. *Политическая наука*. № 4. С. 271-284. http://inion.ru/site/assets/files/3454/4.pdf; Токарев А.А. 2017. Сравнительный анализ сецессий на посткоммунистическом пространстве: квантификация факторов влияния. *Полис. Политические исследования*. № 4. С. 106-117. DOI:https://doi.org/10.17976/jpps/2017.04.08;

[7] Torosyan and Vardanyan 2015:560

[8] *Политические изменения в глобальном мире: теоретико-методологические проблемы анализа и прогнозирования*. Редколлегия: И.С. Семененко (отв. ред.), В.В. Лапкин, В.И. Пантин. 2014. М.: ИМЭМО РАН.

Հոդվածում վերլուծվում են սեցեսիաների հաջողվածության որակական և քանակական գնահատման մի շարք մոդելներ, ինչպես նաև էթնոքաղաքական հակամարտությունների դասակարգման մոդելի օգտագործման հնարավորությունը՝ որպես այս գնահատման օժանդակ գործիք: Հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկվում է միջգիտակարգային մոտեցման, համեմատելի դեպքերի և փոփոխականների ընտրության հիման վրա սեցեսիաների հաջողության գնահատման հայեցակարգ:

ՍԵՑԵՍԻԱՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հայտնի են էթնոքաղաքական հակամարտությունների և, մասնավորապես, սեցեսիաների համեմատական վերլուծության բազմաթիվ մոդելներ: Դրանք տարբերվում են ըստ հետազոտության նպատակադրման, որը բաշխված է բավական մեծ սպեկտրով՝ հակամարտությունների կամ դրանց կարգավորման գործընթացների վրա այս կամ այն փոփոխականի ազդեցության հետազոտությունից մինչև սեցեսիաների հաջողության գնահատումը կամ գործընթացի անհաջող ընթացքի պատճառների բացահայտումը: Ստորև այդ մոդելները կվերլուծվեն՝ բացահայտելու համար դրանց արդյունավետությունը հետևյալ խնդիրների լուծման ժամանակ որպես հետազոտական գործիք կիրառելիս՝

1) ինչ հեռանկարներ ունի տվյալ սեցեսիայի դեպքը հաջողության՝ լիարժեք միջազգային ճանաչման տեսանկյունից,

2) ինչու տվյալ հակամարտությունը և/կամ դրա կարգավորման գործընթացն ավելի հաջող հետագիծ ունի, քան մյուսը, որը շատ նման է դրան:

Սեցեսիաների հաջողվածության գնահատման մոդել[9]: Մոդելի հեղինակը, վերլուծելով նախկին Խորհրդային Միության, նախկին Հարավսլավիայի տարածքներում ձևավորված չճանաչված պետություններում և Հյուսիսային Կիպրոսի տարածքում տիրող իրավիճակը, փորձում է կանխատեսել դե ֆակտո պետությունների հնարավոր վերջնական կարգավիճակը չորս գործոնների միջոցով՝ ազգային շինարարություն, ռազմական հզորություն, մետրոպոլիայի հնարավորություններ, արտաքին հովանավորի աջակցություն և միջազգային հանրության դեր: Հաշվի առնելով Բոսնիայում և Խորվաթիայում հակամարտությունների կարգավորման բանաձևերը՝ նա ընդգծում է, որ «տվյալներն, անշուշտ, միանշանակ չեն», բայց

[9] Kolstø 2006

եզրափակում է՝ «դաշնային կարգավորումը պետք է դիտարկվի որպես չճանաչված քվազիպետությունների մեծամասնության ամենահավանական ապագան»: Ակնհայտ է, որ առայժմ այդ կանխատեսումը դիտարկված դեպքերից ոչ մեկում չի իրականացել: Ավելին, Կոսովոյի անկախությունը ճանաչել են ՄԱԿ-ի ավելի քան 100 անդամ պետություններ: Սխալ կանխատեսման հիմնական պատճառն այն է, որ վերլուծվում են միայն քաղաքական գործոնները, միջգիտակարգային մոտեցման բացակայությունը և վերլուծության ժամանակ իրավական բաղադրիչի (ինքնորոշման իրավունքի) անտեսումը: Այս մոդելի կիրառման արդյունքների համեմատումը հաջորդների հետ ակնհայտորեն վկայում է, թե ինչ էական փոփոխություն են կրել հակամարտությունների հետազոտություններն անցած 10-15 տարիներին:

Պետության կառուցման, ժողովրդավարացման և ճանաչման միջև կապի ուսումնասիրության մոդել[10]: Այս մոդելի հեղինակը, դիտարկելով Աբխազիայի և Լեռնային Ղարաբաղի դեպքերը, ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ավելի մանրամասն պատկերացում կազմել չճանաչված պետությունների մասին, որոնք դուրս են գալիս կաղապարային պատկերացումներից, ըստ որոնց՝ դրանք ոչ այլ ինչ են, քան «ստվերային տնտեսությամբ և ագահ վերնախավերով կառավարվող քրեական կազմավորումներ (badlands)»: Նա պնդում է, որ «փաստացի չճանաչումը կարող է խթան հանդիսանալ ժողովրդավարացման համար: Ճանաչման հասնելու ռազմավարությունում տեղաշարժ է տեղի ունեցել վաստակած ինքնիշխանության (earned sovereignty) շեշտադրման ուղղությամբ, որը հիմնված է, մասնավորապես, ժողովրդավարական լիազորությունների վրա, ինչն արտացոլում է միջազգային հանրության ուշադրությունը ժողովրդավարացման և, ընդհանուր առմամբ, արժեքների նկատմամբ: Սա չճանաչված պետությունների ղեկավարության փորձն է՝ ցույց տալու, որ իրենք կիսում են ընդունված արժեքները և այդ պատճառով վտանգ չեն ներկայացնում»: Թեև ակնհայտ է, որ այս մոդելում հաղթահարված է տևական ժամանակ տիրապետող նշանակություն ստացած կաղապարային քաղաքական դիրքորոշումը, որ չճանաչված պետությունները մերժելի ապօրինի կազմավորումներ են, սակայն, ցավոք, այս մոդելում էլ կա էական թերություն՝ մոտեցումը միակողմանի է, և հաշվի են առնվում միայն քաղաքական փոփոխականները: Մինչդեռ, միջգիտակարգային մոտեցման կիրառումը՝ միջազգային իրավական բաղադրիչի հաշվառումը, զգալիորեն կուժեղացներ հեղինակի կարևոր պնդումների հիմնավորվածությունը:

[10] Caspersen N. 2008a. Separatism and democracy in South Caucasus. *Survival*. Vol. 50, No. 4: 113–136. DOI: https://doi.org/10.1080/00396330802329014

Հետխորհրդային դե ֆակտո պետությունների նախասիրությունների վերլուծության մոդել[11]: Հեղինակները անցկացրել են համեմատական վերլուծություն Աբխազիայում, Լեռնային Ղարաբաղում, Հարավային Օսիայում և Մերձդնեստրում հասարակական կարծիքի հարցման արդյունքների վերաբերյալ: Չնայած հարցումը կազմակերպվել է 9 հարցերի հիման վրա, որոնք առնչվում էին հարցվողների վերաբերմունքին որոշ իրադարձությունների և որոշ ինստիտուտների ու արժեքների նկատմամբ, սակայն հեղինակներն առանցքային հարց են համարում վերջնական քաղաքական կարգավիճակի նկատմամբ վերաբերմունքը: Հատկանշական է, որ վերջնական քաղաքական կարգավիճակի հարցում նրանք կարևորում են դե ֆակտո պետությունների բնակչության կամարտահայտումը, նշում են ժողովրդագրական զգալի փոփոխություններն Աբխազիայում և Հարավային Օսիայում և եզրակացնում, որ մետրոպոլիա պետությունների հետ հաշտվելու շանսերն ընդհանուր առմամբ մեծ չեն, բացառությամբ Մերձդնեստրի, որտեղ բռնության մակարդակը զգալիորեն ցածր էր Խորհրդային Միության փլուզման պահին: Այնուամենայնիվ, հեղինակները չեն ապահովում վերլուծության ամբողջականությունը, քանի որ հաշվի չեն առնում խնդրի միջգիտակարգային էությունը և միջազգային իրավունքի համապատասխան նորմերը, որոնք սահմանում են սեցեսիայի բնույթը և դրան հասնելու հնարավորություններն ու սահմանափակումները:

Հարավային Կովկասի չճանաչված պետությունների պետական և ազգային շինարարության գնահատման մոդել[12]: Այս մոդելը հեղինակներն օգտագործել են երեք սեցեսիաների՝ Աբխազիայի, Հարավային Օսիայի և Լեռնային Ղարաբաղի պետական կենսագործունեության գնահատման նպատակով, որոնք ձևավորվել են հետխորհրդային տարածքում ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման հիման վրա՝ միջազգային համընդհանուր ճանաչման բացակայության պայմաններում: Պետության կայացման և ազգի համախմբման գնահատումը հեղինակները դիտարկում են հինգ պարամետրերի հիման վրա՝

1) տարածքի վերահսկողության իրականացում,

2) իշխանության ինստիտուցիոնալացում՝ ընտրություններ և ինստիտուտների կազմավորում,

3) նույնականացում փաստացի պետության հետ,

4) մետրոպոլիա,

5) հովանավոր պետություններ:

---

[11] O'Loughlin J., Kolossov V. and Toal G., 2014. Inside the post-Soviet de facto states: a comparison of attitudes in Abkhazia, Nagorny Karabakh, South Ossetia, and Transnistria. *Eurasian Geography and Economics*, 2014 Vol. 55, No. 5, 423–456, http://dx.doi.org/10.1080/15387216.2015.1012644.

[12] Blakkisrud and Kolstø 2012

Այս պարամետրերի ընտրությունը հեղինակները հիմնավորում են ինչպես ռեժիմների կայացման ներքին դինամիկայի, այնպես էլ արտաքին աշխարհի հետ հարաբերությունների ու արտաքին ասպեկտների ուսումնասիրման անհրաժեշտությամբ՝ հետազոտելով պետական և ազգային շինարարության գործընթացները: Պետության և ազգի կայացումը դիտվում է որպես տարածքի վերահսկողության և իշխանության ինստիտուցիոնալացման իրականացում, ինչպես նաև դե ֆակտո պետության (ազգային շինարարություն) հետ նույնականացման ամրապնդում և, հետևաբար, նրա աջակցությունը: Այս գործընթացները ուղղված են ներքին ինքնիշխանության ամրապնդմանը[13]: Հետազոտվող դե ֆակտո պետությունների հարաբերություններն արտաքին աշխարհի հետ գնահատվում են մետրոպոլիայի և հովանավոր պետությունների հետ փոխգործակցության մակարդակով, քանի որ մինչև ճանաչումը դե ֆակտո պետությունների միջազգային կապերը գործնականում սահմանափակվում են այդ հարաբերություններով: Վրաստանը մետրոպոլիա է Աբխազիայի և Հարավային Օսիայի դեպքում, Ադրբեջանը՝ Լեռնային Ղարաբաղի դեպքում: Իսկ որպես հովանավոր դիտարկվում է այն պետությունը, որն ապահովում է անվտանգության երաշխիքներ, ինչպես նաև քաղաքական և տնտեսական աջակցություն դե ֆակտո պետությանը[14]: Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հովանավոր պետությունն է, իսկ Ռուսաստանի Դաշնությունը՝ Աբխազիայի և Հարավային Օսիայի:

Ավելի հաջող են դե ֆակտո պետությունների՝ ներքին ինքնիշխանության ուժեղացման և պետական ու ազգային շինարարության միջոցով իենց դիրքերն ամրապնդելու վրա ուշադրությունը կենտրոնացնելու փորձերը: Կարելի է ենթադրել, որ նրանք հաշվի են առնում միջազգային հանրության «սկզբում ստանդարտները, ապա կարգավիճակը» սկզբունքը, որը կիրառվել է Կոսովոյի նկատմամբ[15]:

Նշված փոփոխականների հիման վրա իրավիճակի գնահատման հարցում մոդելի հեղինակները համակարծիք են Ն. Կասպերսենի հետևյալ գնահատականին. «Այսօր հարավկովկասյան դե ֆակտո պետություններում գոյություն ունի անկախ պետականությանը բնորոշ ինստիտուտների և խորհրդանիշների մեծամասնությունը: Ավելին, ինքնիշխանության «նվաճման» հեռանկարը՝ միջազգային ստանդարտների ընդունման միջոցով, որոնք, ի վերջո, կորակեն դրանք միջազգային ճանաչման համար, նշանակում է, որ այդ պետություններն այժմ ևս դրսևորում են ժողովրդավարական

[13] Kolstø 2006

[14] Caspersen N. 2008b. Between puppets and independent actors: Kin-state involvement in the conflicts in Bosnia, Croatia and Nagorno-Karabakh. *Ethnopolitics*. Vol. 7 No. 4. P. 357–72.DOI: https://doi.org/10.1080/17449050701618546

[15] Torosyan T. 2013. Resolution of Intractable Conflicts. *Iran and Caucasus*. Vol. 17. No1. P. 120-129. DOI: 10.1163/1573384X-20130407

պետականության ձևական ատրիբուտների մեծ մասի առկայությունը: Երբ խոսքը ինստիտուցիոնալ շինարարության և գործուն պետականության ստեղծման մասին է, այդ պետությունները տարբեր ընթացք ունեն: Այսօր Լեռնային Ղարաբաղն ու Աբխազիան գործում են համեմատաբար լավ, այն դեպքում, երբ հարավօսական պետականության կառուցման նախագիծը կտրուկ անկում է ունեցել 2004 թվականի վարդերի վրացական հեղափոխությունից հետո, որն ավելի խորացել է ռուս-վրացական 2008 թվականի պատերազմի արդյունքում»[16]:

Իհարկե, սա ընդհանուր, բայց կարևոր գնահատական է քննարկված սեցեսիաների վերաբերյալ, սակայն առանց գործընթացի իրավական բաղադրիչը հաշվի առնելու հնարավոր չէ սեցեսիաների ճակատագրի լիարժեք գնահատումը:

Սեցեսիայի կենսունակության վերլուծության մոդել[17]: Վերլուծվում են հետսոցիալիստական տարածքի երեք սեցեսիաներ՝ Կոսովոն, Աբխազիան և Հարավային Օսիան: Դեպքերի ընտրությունը պայմանավորված է նրանով, որ, ըստ հեղինակների, այդ սեցեսիաները «մասամբ ճանաչված պետություններ են»: Կոսովոն ճանաչել է ՄԱԿ–ի ավելի քան 100 անդամ պետություն, իսկ Աբխազիան և Հարավային Օսիան՝ համապատասխանաբար, միայն 5 և 4: Ընդ որում, տարբերությունը ոչ միայն քանակական է, այլև որակական: Եթե Աբխազիայի և Հարավային Օսիայի հետ երկկողմ դիվանագիտական հարաբերություններ հաստատած երկրների մեջ միայն մեկ երկիր կա (Ռուսաստանը), որի հետ նման հարաբերություններն ունեն թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական և թե՛ անվտանգային կարևոր նշանակություն, ապա Կոսովոն ճանաչած երկրների թվում են ԱՄՆ-ը, Եվրամիության երկրների ճնշող մեծամասնությունը և այլն, ինչը շատ լավ հիմք է ոչ միայն տնտեսական, քաղաքական և մյուս ոլորտներում ակտիվ համագործակցության, այլև այդ պետության հետագա լիարժեք ճանաչման (ՄԱԿ-ին անդամակցության) համար:

Հեղինակներն առավել էական են համարում բոլոր երեք դեպքերի համար հովանավոր պետության առկայությունը և փորձում են գնահատել այդ սեցեսիաների պետական կենսունակությունը, ինչպես նաև դրա վրա մասնակի ճանաչվածության ազդեցությունը: Նրանք եզրակացնում են, որ «մասամբ ճանաչված պետություններին միջազգային համակարգում որպես լիիրավ դերակատարներ ընդգրկելու և, հետևաբար, պետական և ազգային շինարարության համար ավելի բարենպաստ պայմանների ստեղծման հեռանկարները միանշանակ չեն, քանի որ միանշանակ չեն նաև մասնակի ճանաչման հետևանքները»[18]: Մոդելի հիմնական թերությունն ակնհայտ է. հեղինակներն առանցքային փոփոխական են ընտրել «մասամբ ճանաչված

[16] Caspersen 2008a
[17] Мелешкина, Кудряшова 2015
[18] Мелешкина, Кудряшова 2015: 76

պետություն» լինելը, ինչը հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ուսումնասիրության ժամանակ անօգուտ է, քանի որ նման կարգավիճակ՝ իր քաղաքական և իրավական առանձնահատուկ հատկանիշներով, գոյություն չունի: Մինչդեռ բացակայում են գործընթացի այն փոփոխականները (իրավական բաղադրիչի), որոնք սահմանում են կոռեկտ սեցեսիայի պայմանները: Հետևաբար այս մոդելը ընդհանրապես անլիարժեք է, և նպատակահարմար չէ դրա կիրառումը հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների ուսումնասիրման համար:

Սեցեսիաների մուլտիմոդալ պերֆորմատիվ վերլուծություն[19]: Ի. Ֆոմինի առաջարկած այս մոդելը կիրառվել է նույն սեցեսիաների՝ Աբխազիայի, Կոսովոյի և Հարավային Օսիայի ուսումնասիրման նպատակով: Այն հիմնված է սոցիալական իրականության հետազոտության սեմիոտիկ մոտեցման՝ մուլտիմոդալ պերֆորմատիվ վերլուծության վրա[20]: Հետազոտվող բոլոր երեք սեցեսիաները նկարագրվում են վեց պերֆորմատիվ ակտերի միջոցով՝

1) կայունություն (գոյակցություն մեկ պետության շրջանակներում),

2) հակասությունների կուտակում (սրացում՝ սեցեսիայի փորձ, որն ունի պերֆորմատիվ կեցվածքի բնույթ (միզինվոկացիա) և ուժային փոխգործակցություն հրահրող),

3) իլոկուտիվ ճեղքում (ինտերվենցիա և սառեցում՝ միջամտում),

4) մասնակի կայունացում (բանակցություններ՝ հաջող պերֆորմատիվ փոխազդեցությունների ռեժիմի վերականգնում),

5) հակասությունների կուտակում (ճգնաժամ. իրավիճակը փոխելու նոր, ոչ ինվոկատիվ փորձեր),

6) իլոկուտիվ բեկում (ճանաչում. միզինվոկատիվ դասավորության վերափոխում հաջող պերֆորմատիվի)[21]:

Պերֆորմատիվ ակտերը մի շարք առանցքային «արտահայտություններ» են (հռչակագրեր, հայտարարություններ, օրենսդրության փոփոխություններ և այլն) և հակամարտության կողմերի քայլեր, որոնք ունեն ընդհանուր նպատակադրում: Աբխազիայի, Հարավային Օսիայի և Կոսովոյի հակամարտությունների կողմերի «արտահայտությունների» և քայլերի ուսումնասիրության արդյունքում հեղինակը եզրակացնում է, որ դրանք բոլորն էլ հաջող սեցեսիաներ են, իսկ ներկայացված վեցակտանոց մոդելը «սեցեսիայի պերֆորմատիվ իրադարձության զարգացման»

---

[19]Фомин 2016

[20] Фомин И.В., Ильин М.В. 2016. Зачем семиотика политологам? *Политическая наука*. № 3. С. 12-29. http://inion.ru/site/assets/files/3517/nauka_016_3.pdf

[21]Фомин 2016:282

ընդհանուր կառուցվածքն է[22]: Հեղինակը նաև կարծում է, որ առաջարկվող յուրահատուկ մեթոդաբանությունը՝ պերֆորմատիվների մուլտիմոդալ վերլուծության հնարքները, պահանջում են հետագա զարգացում և հստակեցում: Իսկապես, մոդելի ամբողջականությունը և լիարժեքությունը ապահովելու համար անհրաժեշտ է՝

-կապել այն միջազգային իրավունքի առանցքային նորմերի հետ, որոնք սպառիչ կարգավորում են ժողովուրդների ինքնորոշման գործընթացները,

-հաշվի առնել աշխարհաքաղաքական գործոնը, որն ամենաազդեցիկն է դիտարկվող սեցեսիաների համար:

Սեցեսիաների համեմատական վերլուծություն գործոնների քվանտիֆիկացման հիման վրա[23]: Ուսումնասիրության հեղինակը երկու նպատակ է հետապնդում՝

1) մշակված մոդելի փորձարկում 8 սեցեսիաների համար,

2) ուսումնասիրության վարկածի ստուգումը՝ «Դոնեցկի ժողովրդավարական հանրապետության (ԴԺՀ) և Լուգանսկի ժողովրդական հանրապետության (ԼԺՀ) սեցեսիաների հաջողությունը հիմնականում պայմանավորված է հովանավոր պետության մասնակցությամբ: Դրա հզորության գործոնների նշանակության, ինչպես նաև ընդհանուր սահմանի առկայության ռեդուկցիան սպառնալիք է այդ սեցեսիաների ձախողման համար»[24]:

Հետկոմունիստական ութ սեցեսիաներ (Չեչնիայի Հանրապետություն, Գագաուզիայի Հանրապետություն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, Մերձդնեստրյան Մոլդովական Հանրապետություն, Հարավային Օսիայի Հանրապետություն, Աբխազիայի Հանրապետություն, Կոսովոյի Հանրապետություն, Սերբական Կրահինայի Հանրապետություն) համեմատվում են 10 փոփոխականների հիման վրա, որոնցից յուրաքանչյուրին սեցեսիայի հաջողության վրա ազդեցության չափի հիման վրա շնորհվում է թվային արժեք՝ -3-ից +3 սանդղակի վրա՝ կատարվում է պարամետրերի քվանտիֆիկացիա: Սեցեսիայի հաջողության հավանականությունը հաշվարկվում է բոլոր փոփոխականների արժեքների հանրագումարով:

Սեցեսիայի նշված 8 նախագծերի կայացման, զարգացման և ավարտի գործընթացի նկարագիրը ձևավորելու նպատակով հեղինակն օգտագործում է 10 փոփոխականներ՝

1) սեցեսիայի սկսվելուց առաջ պետության կազմում ինքնավար կարգավիճակի առկայություն,

2) նախկին դաշնային (միութենական) պետության կազմում իր կարգավիճակը պահպանելու ձգտում,

---

[22] Фомин 2016:282

[23] Токарев 2017

[24] Токарев 2017: 108

3) սեցեսիայի մեկնարկի մասին որոշման ժամանակ անկախություն հովանավոր պետությունից,

4) հովանավոր պետության հետ ընդհանուր սահմանի առկայություն,

5) մետրոպոլիայի ռազմական ագրեսիան,

6) ներքին ինքնիշխանության արդյունավետության մակարդակ,

7) խաղաղապահների տեղակայում հակամարտության տարածաշրջանում,

8) սեփական լեզվի առկայություն, որը տարբերվում է մետրոպոլիայի պետական լեզվից,

9) մետրոպոլիայի գերիշխող էթնոսից տարբերվող գերիշխող էթնոսի առկայություն հակամարտության տարածաշրջանում,

10) ճանաչում ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից:

Կարելի է համաձայնել ԴԺՀ-ի և ԼԺՀ-ի համար ստացված արդյունքների հետ. որոնք վատագույնն են բոլոր դիտարկված սեցեսիաներից, ինչպես նաև վերաինտեգրման երեք դեպքերի (Չեչնիա, Գագաուզիա և Սերբական Կրաինա) արդյունքների հետ, որոնք բացասական գնահատականներ են ստացել: Սակայն մյուս դեպքերի համար ստացված արդյունքների համեմատությունը համոզիչ չէ: Օրինակ, դրական արդյունքների շարքում Կոսովոյի գնահատականն ամենացածրն է: Իհարկե, պետության կենսագործունեությամբ այդ սեցեսիան ավելի հաջողված չէ, քան հետխորհրդային տարածքում գտնվող դեպքերը, սակայն արդեն այն փաստը, որ Կոսովոյի Հանրապետությունը ճանաչել են 110-ից ավելի ՄԱԿ-ի անդամ պետություններ, ցույց է տալիս, որ այն շատ ավելի մոտ է միջազգային ճանաչմանը (ՄԱԿ-ին անդամակցությանը), բայց «ՄԱԿ-ի անդամների ճանաչում» փոփոխականի արժեքով գերազանցում է Աբխազիային և Հարավային Օսիային ընդամենը +1-ով: Այն դեպքում, երբ Աբխազիան «անկախություն հովանավորից» փոփոխականով Կոսովոյից առաջ է 4 միավորով, իսկ ԼՂՀ-ից՝ 1 միավորով: Մինչդեռ, օրինակ, էթնոքաղաքական հակամարտությունների մեկ այլ դասակարգման համաձայն[25], արտաքին քաղաքական գործոնը Հարավային Օսիայի և Աբխազիայի համար կոնֆլիկտայնության ակտուալացման համատեքստում հիմնականն է, իսկ Լեռնային Ղարաբաղի, Կոսովոյի և Ղրիմի համար՝ լրացուցիչ, այն դեպքում, երբ վերջիններիս համար հիմնական փոփոխականը պատմական հիշողությունն է: Ակնհայտ է, որ այս մոդելը լուրջ բարելավման կարիք ունի՝ փոփոխականների արժեքների որոշման հիմնավորման հետ կապված: Հարկ է նաև նշել, որ Ա. Տոկարևի առաջարկած մոդելի բարելավման

[25] Семененко И.С., Лапкин В.В., Пантин В. И. 2016. Типология этнополитической конфликтности: методологические вызовы “Большой теории”. *Полис. Политические исследования*. № 6. С. 69-94, DOI:https://dx.doi.org/ 10.17976/jpps/2016.06.06

դեպքում անհրաժեշտ կլինի հաշվի առնել նաև այն փոփոխականները, որոնք որոշում են տվյալ դեպքի համապատասխանությունը միջազգային իրավունքին կամ աշխարհաքաղաքական բաղադրիչի ազդեցությունը:

Էթնոքաղաքական կոնֆլիկտայնության դասակարգման մոդել[26]: Այս մոդելը կարող է կարևոր նշանակություն ունենալ էթնոքաղաքական հակամարտությունների և, մասնավորապես, սեցեսիաների համեմատական վերլուծության դեպքում: Նախնական դասակարգումը թույլ կտա հստակեցնել այն հակամարտությունների շրջանակը, որոնք համեմատելի են միմյանց հետ:

Հետազոտության կենտրոնական խնդիրն է էմպիրիկ տվյալների զանգվածի որակական վերլուծության միջոցով մշակել և հիմնավորել էթնոքաղաքական հակամարտությունների տիպաբանությունը՝ տվյալ հակամարտության համար լարվածության տեսակետից առանցքային գործոնների բացահայտման միջոցով[27]:

Այդ նպատակով ուսումնասիրելով էթնոքաղաքական հակամարտությունների 27 դեպքեր՝ հեղինակները դրանց դասակարգման մատրիցան կառուցել են ըստ երկու չափումների՝ հակամարտությունների երեք տեսակների և վեց փոփոխականների (գործոնների): Հակամարտության կողմերի քաղաքական նպատակադրման առանձնահատկությունների հիման վրա որոշվել են հակամարտությունների երեք հիմնական տեսակները՝ քաղաքական-կառավարչական, քաղաքական-ինստիտուցիոնալ, քաղաքական-տարածքային: Մեծ թվով դեպքերի վերլուծության հիման վրա առանձնացվել են նաև վեց փոփոխականներ՝ պատմական հիշողության, տնտեսական զարգացման անհամամասնության և հստակ արտահայտված սոցիալական անհամամասնություններ, մշակութային-լեզվաբանական գործոններ, միջէթնիկական (էթնիկ, միջկլանային) հակասությունների, միջդավանբանական հակասությունների գործոն, արտաքին քաղաքական գործոն[28]: Կարևոր նշանակություն ունի հեղինակների ըմբռնումն առ այն, որ մեծ դժվարություններ են առաջանում այնպիսի բարդ երևույթների օրինաչափությունների տեսական ընդհանրացման ժամանակ, ինչպիսիք են հակամարտությունները: Մոդելին ճկունություն հաղորդելու նպատակով, հաշվի առնելով կոնֆլիկտայնության բարդագույն բնույթը, առանձնացվում են հակամարտությունների հիմնական և, անհրաժեշտության դեպքում, լրացնող տեսակներ: Որպես հետևանք, յուրաքանչյուր հակամարտություն մատրիցայում ստանում է երկու բջիջներ՝ հիմնական և լրացուցիչ, և կարող է վերլուծվել ինչպես առաջին բջջում, այնպես էլ՝ երկրորդում:

---

[26] Семененко, Пантин, Лапкин 2016
[27] Семененко, Пантин, Лапкин 2016:74
[28]Семененко, Пантин, Лапкин 2016:76

Իհարկե, այս մոդելը նախատեսված չէ հակամարտությունների հետազոտության ամենաբարդ խնդրի լուծման՝ սեցեսիաների հաջողվածության կանխատեսման համար, բայց այն կարող է օգտակար լինել համեմատելի հակամարտությունների խմբի որոշման համար: Այդ նպատակով այն անհրաժեշտ է լրամշակել՝ միջգիտակարգային մոտեցում ապահովելու նպատակով, որի բացակայությունը կարող է հանգեցնել արդյունքների խեղաթյուրմանը: Օրինակ, սեցեսիաների հաջողության գնահատման ժամանակ իմաստ չունի Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության դեպքի դիտարկումը, քանի որ դրա իրականացման գործողությունները հակասում են միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներին: Արդարադատության միջազգային դատարանի (ICJ) խորհրդատվական եզրակացության մեջ նշվում է, որ անկախության միակողմանի հռչակումը լեգիտիմ չէ, երբ այն ուղեկցվում է ուժի ապօրինի կիրառմամբ կամ միջազգային ընդհանուր իրավունքի նորմերի աղաղակող այլ խախտումներով[29]: Որպես նման օրինակներ նշվում են նաև Հարավային Ռոդեզիայի և Սերբական Կրաինայի դեպքերը: Սեցեսիաների հաջողվածության վերլուծության տեսակետից նման դեպքերի վերլուծությունն իմաստ չունի, քանի որ դրանք չեն բավարարում միջազգային իրավունքի նորմերի պայմանները: Երկչափ մոդելում հաշվի առնվող մի շարք գործոնների շրջանակի ընդլայնումն ինքնորոշման և սեցեսիայի գործընթացը կարգավորող միջազգային իրավունքի նորմերով լրջորեն կբարելավի այն՝ քննարկումից դուրս թողնելով անհամեմատելի դեպքերն ու դրանով պայմանավորված խեղաթյուրումները:

Հատկանշական է, որ այս բաղադրիչն անտեսվում է ինչպես սեցեսիաների որակական, այնպես էլ քանակական գնահատման մոդելների համար: Ավելին, էթնոքաղաքական հակամարտության կարևորությունը, որպես մի շարք քաղաքական գործընթացների առանցքային գործոն, ինչպես նաև այդ գնահատման ամբողջականության ապահովման անհրաժեշտությունը պահանջում են սեցեսիաների վերլուծության նկատմամբ խիստ հիմնավորված հայեցակարգային մոտեցման կիրառում, որը հաշվի է առնում բոլոր էական գործոնները, պայմանները և փոփոխականները:

[29] Accordance with International Law of the Unilateral Declaration of Independence in Respect of Kosovo, Advisory Opinion of 22 July 2010, [2010] ICJ Rep. (Kosovo Advisory Opinion), para.81, www.icj-cij.org/docket/files/141/15987.pdf.

ՍԵՑԵՍԻԱՅԻ ՀԱՋՈՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԻՋԳԻՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Շատ հաճախ քաղաքական համակարգերի, ինստիտուտների և գործընթացների փոխգործակցությունը դժվար է բացատրել միայն առկա տեսական մոդելների և սխեմաների հիման վրա: Հետևաբար, համեմատական վերլուծությունը կարևոր է ինչպես այդ գործընթացների և երևույթների կանխատեսման, խթանման կամ կանխարգելման, այնպես էլ դրանց արդյունավետության բարձրացման համար: Այս մեթոդը նաև թույլ է տալիս բացահայտել և հիմնավորել ինչպես այդ գործընթացների և երևույթների, այնպես էլ այդ գործընթացներին մասնակցող հասարակական միավորների՝ ժողովուրդների, համայնքների, հասարակությունների, նրանց մշակույթների օրինաչափություններն ու առանձնահատկությունները[30]: Ըստ Դ. Ապտերի[31]՝ համեմատությունը իրադարձությունների և երևույթների հիման վրա գաղափարների կապը բացահայտելու հատուկ ձև է, որը բխում է քաղաքական փիլիսոփայությունից կամ տեսությունից: Համեմատական մեթոդի կիրառման հիմնական նպատակն է բացահայտել, թե ինչ հատկանիշներով և ինչու են երկու և ավելի իրադարձություններ, երևույթներ կամ գործընթացներ տարբերվում միմյանցից կամ իրար նման, ինչպես նաև էմպիրիկ տվյալների վերլուծության հիման վրա ստանալ օրինաչափությունների, մոդելների, դասակարգումների ընդհանրացումներ, որոնք բնութագրում են այդ իրադարձությունները, երևույթները և գործընթացները[32]: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ այս մեթոդի կիրառումը նույնպես հղի է ոչ հավաստի եզրակացություններով և արդյունքներով, եթե համեմատվում են անհամեմատելի դեպքեր[33]: Այս մեթոդի կիրառման արդյունավետությունը պայմանավորված է երկու գործոնների ընտրության օպտիմալությամբ՝ համեմատելի դեպքերի և փոփոխականների, որոնք բնութագրում են այդ դեպքերը[34]: Հետևաբար, անհրաժեշտ է գտնել երկու խնդիրների լուծում՝ ճիշտ ընտրել համեմատական դեպքեր, որոնք համապատասխանում են հետազոտական առաջադրանքի նպատակներին և ճիշտ

---

[30] Smelser N. 2003. On Comparative Analysis, Interdiscisciplinary and Internationalization in Sociology, *International Sociology*, Vol. 18(4), P. 643-657.

[31] Apter D.E. 1996. Comparative politics, old and new. *Goodin, R.E., Klingemann, H.-D. (Eds.), A New Handbook of Political Science*. Oxford University Press, Oxford, . 372–397.

[32] Torosyan T. and, Petrosyan M., 2015. Comparative Analysis of Conflicts: Modeling Problems. *Armenian Journal of Political Science*. No. 2. P. 121-138.

[33] Torosyan and Petrosyan 2015:130

[34] Lijphart A. 1971. Comparative Politics and Comparative Method, *The American Political Science Review*. Vol. 65. No 3. P. 682-693.

ընտրել դրա համար անհրաժեշտ և բավարար փոփոխականներ: Ստորև կդիտարկվի այդ խնդիրների լուծումը, երբ ուսումնասիրության նպատակը սեցեսիայի հաջողվածության գնահատումն է:

Սեցեսիաների դասակարգումը: Սեցեսիաների հաջողվածության վերլուծության արդյունավետության ապահովման հայեցակարգային գաղափարը կապված է խնդրի միջգիտակարգային էության հետ: Ի. Սեմենենկոն և գործընկերները միանգամայն արդարացիորեն նշում են, որ «էթնոքաղաքական կոնֆլիկտաբանության համատեքստում համապատասխան քաղաքական պրակտիկայի ուսումնասիրությունը բացահայտում է միաչափ մոտեցումների անարդյունավետությունը ժամանակակից քաղաքականության կենսագործունեությունն ապահովող փոխազդեցությունների ամբողջ համալիրի վերլուծության ժամանակ: Երևույթի բարդությունը ստիպում է փնտրել համալիր բացատրական մոդելներ» [35]: Շատ հաճախ էթնոքաղաքական հակամարտությունների կամ սեցեսիաների ուսումնասիրության ժամանակ այդ անարդյունավետությունն արտահայտվում է խնդրի դիտարկմամբ միայն մեկ գործոնի հիման վրա: Օրինակ՝ քաղաքական բաղադրիչի կամ մեկ գիտակարգի, օրինակ՝ քաղաքագիտության շրջանակներում՝ ուշադրությունից դուրս թողնելով խնդրի իրավական (միջազգային) բաղադրիչը: Դրա հետևանքով համեմատելի սեցեսիաների շարքում կարող են ընդգրկվել ոչ կոռեկտ դեպքեր, օրինակ՝ Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության և Սերբական Կրաինայի վերոհիշյալ դեպքերը: Քանի որ սեցեսիայի լեգիտիմության տեսանկյունից առանցքային նշանակություն ունի ազգերի ինքնորոշման իրավունքի կոռեկտ կիրառումը, որոշ պարզաբանումներ են պահանջվում ժամանակակից միջազգային իրավունքի հիմնարար գաղափարներից մեկի և դրա կիրառման դժվարությունների վերաբերյալ: Առավել ևս, որ երբեմն թյուրիմացությունները (բարդ միջգիտակարգային մոտեցման կիրառման անհրաժեշտության հետ կապված դժվարությունների պատճառով) հայտնվում են նաև գիտական հրատարակություններում: Օրինակ, դրանցից մեկում արվում է հետևյալ հաստատագրումը. «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին 1970 թվականի հռչակագրում առանձին բաժին է նվիրված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքին: Դրանում հստակեցվում է, որ «օտարերկրյա լծի, գերիշխանության և շահագործման» ենթարկված պետությունները կարող են ակնկալել, որ անկախություն կստանան, մինչդեռ մյուս բոլոր ժողովուրդների ինքնորոշումը կարող է իրականացվել միայն այն չափով, որը չի խախտում պետության տարածքային ամբողջականության սկզբունքը»[36]: Մինչդեռ, ժողովուրդներին երկու խմբի բաժանելու

[35]Семененко, Пантин, Лапкин 2016: 70

[36]Троицкая О. В. 2015. Право наций на самоопределение: концептуальные подходы и практики применения. *Полис. Политические исследования*. № 6. с. 116-130. DOI: 10.17976/jpps/2015.06.12.

«գաղափարը», որը սկզբունքորեն խեղաթյուրում է Հռչակագրի էությունը, անհնար է հայտնաբերել ո՛չ Հռչակագրում, ո՛չ միջազգային իրավունքի այլ փաստաթղթերում, որոնք վերաբերում են ինքնորոշման սկզբունքին: Հռչակագրի հիշատակված բաժինը սկսվում է հետևյալ հաստատագրումով. «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության մեջ ամրագրված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հիման վրա ***բոլոր ժողովուրդներն*** իրավունք ունեն ազատորեն որոշելու իրենց քաղաքական կարգավիճակը՝ առանց արտաքին միջամտության... Յուրաքանչյուր պետություն պարտավոր է հարգել այդ իրավունքը՝ կանոնադրության դրույթներին համապատասխան»[37]: Հռչակագրում «օտարերկրյա լծի, գերիշխանության և շահագործման» ենթարկված պետությունների միակ հիշատակումը վերաբերում է այն հատվածին, որով ՄԱԿ-ի անդամ պետություններին հիշեցվում է, որ նրանք պարտավոր են «աջակցել ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի իրականացմանը՝ կանոնադրության դրույթներին համապատասխան և աջակցել Միավորված ազգերի կազմակերպությանը՝ այդ սկզբունքի իրականացման վերաբերյալ կանոնադրությամբ իր վրա դրված պարտականությունների կատարման գործում, որպեսզի ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն այդ սկզբունքն իրականացվի, որպեսզի ...

բ) անհապաղ վերջ դրվի գաղութատիրությանը՝ պատշաճ հարգանք դրսևորելով շահագրգիռ ժողովուրդների ազատ արտահայտված կամքի նկատմամբ, ինչպես նաև նկատի ունենալով, որ ժողովուրդների ենթարկվածությունը օտարերկրյա լծին, գերիշխանությանը և շահագործմանը հանդիսանում է սույն սկզբունքի խախտում, ինչպես նաև մարդու հիմնական իրավունքների մերժում և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը»[38]:

Ակնհայտ է, որ ՄԱԿ-ը ևս մեկ անգամ կազմակերպության անդամ երկրների ուշադրությունը հրավիրում է այն ժամանակի կարևորագույն խնդիրներից մեկի՝ ապագաղութացման անհապաղ լուծման անհրաժեշտության վրա:

Տրոիցկայայի հոդվածում նշվում է նաև, որ իբրև թե ինքնորոշման երկու հայեցակարգ կա: Առաջինը լիբերալ հայեցակարգն է, որը որդեգրել են ԱՄՆ-ը և Եվրամիության երկրները՝ այն մեկնաբանելով որպես ցանկացած ազգի համընդհանուր իրավունք... կառավարման այնպիսի ձև սահմանելու համար, որը երաշխավորում է հիմնարար իրավունքների և ազատությունների պահպանում»[39]: Ըստ հեղինակի՝ ոչ

[37] Declaration on Principles of International Law concerning Friendly Relations and Co-operation among States in accordance with the Charter of the United, A/RES/2625 (XXV) 24 Oct. 1970. https://undocs.org/en/A/RES/2625(XXV)
[38] Նույն տեղում:
[39] Троицкая 2015:128

արևմտյան երկրների մեծամասնությունը ինքնորոշման այլ հայեցակարգ է որդեգրել, որը ընկալվում է որպես «հանրության՝ կառավարման ցանկացած քաղաքական ձևի ընտրության իրավունք, որը թույլ է տալիս հանրությանը կիրառել իրենց մշակույթը, լեզուն կամ կրոնը՝ առանց դրսի ճնշման, և չեն կապում ինքնորոշումը լիբերալիզմի հետ»: Իրականում, ՄԱԿ-ի անդամ բոլոր երկրները, այդ կազմակերպության կանոնադրության համաձայն, պետք է հարգեն ազգերի ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի համապատասխան նորմերի շրջանակներում, աջակցեն միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկի իրականացմանը և չեն կարող իրենց հայեցողությամբ մեկնաբանել այն, քանի որ միջազգային իրավունքը լիարժեքորեն և սպառիչ սահմանել է այդ սկզբունքի և դրա կիրառման հետ կապված բոլոր հարցերի պատասխանները: Միաժամանակ, միջազգային իրավունքը ոչ մի կերպ չի կապում ինքնորոշումը լիբերալիզմի հետ: Ավելին, ինքնորոշման իրավունքի կիրառման պրակտիկան ցույց է տալիս, որ նման դեպքերում ազդեցիկ երկրները գործում են իրենց հայեցողությամբ՝ ազգային շահերի իրենց ըմբռնմանը համապատասխան, առանց որևէ (այդ թվում և, ցավոք, միջազգային իրավունքի) հայեցակարգերի և սկզբունքների պահպանման: Միայն մեկ օրինակ. ԱՄՆ-ը և Եվրամիության երկրները ճանաչել են Կոսովոյի, Արևելյան Թիմորի, Հարավային Սուդանի, Էրիթրեայի անկախությունը ինքնորոշման իրավունքի հիման վրա, բայց կարելի՞ է արդյոք լրջորեն խոսել այդ պետություններում լիբերալիզմի առկայության մասին: Միաժամանակ, ԱՄՆ-ը և Եվրամիության երկրները չեն ճանաչել Հարավային Կովկասի դե ֆակտո պետությունների անկախությունը, որոնք ոչնչով չեն զիջում վերը թվարկվածներին: Ակնհայտ է, որ այստեղ հնարավոր չէ ձևակերպել ճանաչման որևէ տրամաբանություն կամ հայեցակարգ, բացի ազգային շահերից:

Մոտեցման միակողմանի լինելը կարող է բերել նաև հետազոտության արդյունքների ավելի լուրջ խեղաթյուրումների: Բանակցային գործընթացի մի շարք հայտնի մասնագետներ 90-ական թվականներին առաջարկել են անլուծելի հակամարտությունների (intractable conflicts) տեսությունը[40]: Այս տեսության հեղինակները փորձում են գտնել այն հարցի պատասխանը, թե ինչու են

[40] Zartman I. W. and Touval S. 1996. International Mediation in the Post-Cold War Era, *Ch. Crocker; F. Hampson; P. Aall (eds.), Managing Global Chaos,* Washington DC. P. 445-461; Putnam L. L. and Wondolleck J. M. 2002. Intractability: Definitions, Dimensions, and Distinctions, *R. J. Lewicki; B. L. Gray; M. Eliott (eds), Making Sense of Intractable Conflicts,* Washington. P. 35-59; Burg S. L. 2005. Intractability and Third-Party Mediation in the Balkans, *Crocker Ch., Hampson F. and Aall P. (eds.). Grasping the Nettle: Analyzing Cases of Intractable Conflict,* Washington: 183-207; Kriesberg L. 2005. Nature, Dynamics, and Phases of Intractability, *Ch. Crocker; F. Hampson; P. Aall (eds.). Grasping the Nettle: Analyzing Cases of Intractable Conflict,* Washington: 65-97; Zartman, I. W. 2005. Analyzing Intractability, *(eds.) Ch. Crocker; F. Hampson; P. Aall, Grasping the Nettle: Analyzing Cases of Intractable Conflict*, Washington, DC. P. 47-64.

հակամարտությունները և դրանց կարգավորման գործընթացները տասնամյակներ շարունակ ապարդյուն շարունակվում: Նրանց վարկածի, իսկ հետագայում՝ նաև տեսության համաձայն՝ հանգուցալուծումը հնարավոր է դառնում միայն այն ժամանակ, երբ հակամարտության կողմերը պատրաստ են դրան: Նրանք, քաղաքական շահարկումների ազդեցությամբ, ինչպես նաև այլ գիտակարգի՝ միջազգային իրավունքի շրջանակներում անհրաժեշտ գիտելիքների ու հմտությունների չտիրապետելու հետևանքով անտեսում են միջազգային իրավունքի նորմերն ու գործիքները՝ խաղաղության ու անվտանգության պատասխանատվությունը ՄԱԿ-ի ինստիտուտների ու ազդեցիկ պետությունների, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի անդամների վրայից տեղափոխում են հակամարտության կողմերի վրա: Արդյունքում, խնդրի միջգիտակարգային բնույթի անտեսման պատճառով ձևավորվել է վերոհիշյալ արհեստական և անօգուտ «տեսությունը», որը տասնամյակներ շարունակ «հիմնավորել է» համապատասխան կառույցների և ուժերի կողմից հակամարտությունների լուծմանն ուղղված գործուն քայլերի բացակայությունը[41]:

Սեցեսիայի հաջողվածությունը: Հետազոտության արդյունքների ճշգրտությունն ու ամբողջականությունն ապահովելու համար պետք է նաև հստակ ձևակերպել «սեցեսիայի հաջողվածություն» հասկացությունը: Ակնհայտ է, որ այն ասոցացվում է սեցեսիայի արդյունքում ձևավորված պետության ճանաչման հետ: Պետության ճանաչումը միաժամանակ և՛ քաղաքական, և՛ իրավական հարց է: Քաղաքական է, քանի որ պետության լիարժեք միջազգային ճանաչումը նրա անդամակցությունն է ՄԱԿ-ին՝ կազմակերպության անդամ պետությունների ներկայացուցիչների քվեարկության արդյունքում: Այդ քվեարկությունը չի սահմանափակվում ոչնչով, այդ թվում ՝ միջազգային իրավունքի նորմերով, և արտահայտում է տվյալ պետության քաղաքական դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ: Երբեմն որպես ճանաչում ներկայացվում է պետությունների միջև երկկողմ հարաբերությունների հաստատման ակտը: Իհարկե, պետության միջազգային ճանաչմանը, որպես կանոն, նախորդում է ՄԱԿ-ի անդամ պետությունների հետ երկկողմ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, սակայն դա միշտ չէ, որ հանգեցնում է միջազգային ճանաչման: Ուստի, ՄԱԿ-ի անդամ մի քանի կամ մի քանի տասնյակ պետությունների հետ դիվանագիտական հարաբերությունների հաստատումը չի կարող դիտվել որպես երաշխիք, որ այդ պետությունը հետագայում անպայման կդառնա ՄԱԿ-ի անդամ: Ավելին, եթե սեցեսիան չի համապատասխանում միջազգային իրավունքի նորմերով սահմանված պահանջներին, ապա այն չի ճանաչվի, քանի որ մետրոպոլիան ծանրակշիռ փաստարկներ կունենա դրան խոչընդոտելու համար: Հետևաբար, սեցեսիան հաջողված կլինի հեռանկարում (երբ հաղթահարվեն քաղաքական

[41] Torosyan 2013:428

խոչընդոտները), եթե համապատասխանում է միջազգային իրավունքի նորմերին[42]: Ցավոք, չնայած տեսականորեն նման համապատասխանությունը ինքնորոշման, հետևաբար և սեցեսիայի միակ օրինական պայմանն է, սակայն իրական կյանքում միջազգային ճանաչման վրա ուժեղ ազդեցություն ունի (աշխարհա)քաղաքական բաղադրիչը[43] : Այն տարածաշրջաններում, որտեղ առկա է աշխարհաքաղաքական լարվածություն կամ դիմակայություն, գրեթե միշտ սեցեսիայի ճանաչումը հետաձգվում է մինչև դրա անկում[44]: Այսպիսով, միջազգային իրավունքի նորմերին համապատասխանությունը սեցեսիայի գործընթացի լեգիտիմության և դրա հաջողության անհրաժեշտ պայմանն է, իսկ (աշխարհա)քաղաքական խոչընդոտների հաղթահարումը բավարար պայման է:

Դեպքի համապատասխանությունն անհրաժեշտ պայմանին՝ միջազգային իրավունքի նորմերին: Չնայած որոշ միջազգային կազմակերպությունների և առանձին պետությունների քաղաքական շրջանակներ շարունակում են հայտարարել, որ միջազգային իրավունքի երկու նորմերի՝ ազգերի ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության միջև առկա են անորոշություններ կամ հակասություններ, համապատասխան փաստաթղթերը խստորեն և հստակ կարգավորում են այդ հարցը[45]: Դրանցից հիմնականներն են ՄԱԿ-ի կանոնադրությունը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, որն ընդունվել է 1966 թվականի դեկտեմբերի 16-ին Գլխավոր ասամբլեայի 2200Ա (XXI) բանաձևով, և Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը, որն ընդունվել է 2625 բանաձևով: Կանոնադրության 1-ին հոդվածը սահմանում է ՄԱԿ-ի հիմնական նպատակները, որոնցից մեկն ասում է. «ազգերի միջև բարեկամական հարաբերություններ զարգացնել ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի հարգման հիման վրա, ինչպես նաև ձեռնարկել այլ համապատասխան միջոցներ համընդհանուր խաղաղության ամրապնդման համար»[46]: Ակնհայտ է, որ ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքը հիմնարար նշանակություն ունի միջազգային իրավունքի համար: Քաղաքացիական և

[42]Torosyan T. 2015 Perspectives of Rights and Challenges of Political Interests in Conflict Resolution: The Cases of Kosovo and Nagorno-Karabakh. *Essex Human Right Review*. Vol. 10. No 1; Torosyan 2013.
[43]Ryngaert C. and Sobrie S. 2011. Recognition of States: International Law or Realpolitik? The Practice of Recognition in the Wake of Kosovo, South Ossetia, and Abkhazia. *Leiden Journal of International Law*. No. 24. P. 467–490. DOI: https:// doi:10.1017/S0922156511000100
[44] Torosyan and Vardanyan 2015:577
[45] Ryngaert and Sobrie 2011; Torosyan 2010; Torosyan 2013
[46] Charter of the United Nations. https://www.un.org/en/charter-united-nations/

քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 1-ին հոդվածն արձանագրում է, որ «բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատ ապահովում են իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»[47]: Միանգամայն ակնհայտ է, որ այդ իրավունքը միայն մի խումբ ժողովուրդների ինչ-որ հատկանիշով վերագրելու բոլոր փորձերը շահարկումներ են, որոնք շատ հաճախ կիրառվում են տարբեր քաղաքական դերակատարների կողմից: Մնացած հարցերը վերացնում են ՄԱԿ-ի կանոնադրության համաձայն պետությունների միջև բարեկամական հարաբերություններին և համագործակցությանը վերաբերող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագիրը, որը կոդիֆիկացիոն նշանակություն ունի ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի համար և սահմանում է այդ սկզբունքի իրագործման ձևերն ու պայմանները: Համաձայն Հռչակագրի՝ «ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը միացումը կամ դրա հետ միավորումը, կամ ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի հաստատումը, որն ազատորեն ընտրել է ժողովուրդը, այդ ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրականացման ձևերն են»[48]: Ակնհայտ է, որ ո՛չ մետրոպոլիան, ո՛չ էլ մյուս պետությունները, այդ թվում՝ ազդեցիկ պետությունները, իրավունք չունեն միջամտելու ինքնորոշվող ժողովրդի քաղաքական կարգավիճակի որոշման գործընթացին կամ դրա համար որևէ խոչընդոտ ստեղծելու: Այս սկզբունքի իրագործման միակ պայմանը ինքնորոշվող ժողովրդի կարգավիճակի ազատ սահմանումն է՝ հանրաքվեի միջոցով ժողովրդի ազատ կամաարտահայտումը: Հետևաբար, եթե խոսքը կոռեկտ սեցեսիայի մասին է, ապա անհրաժեշտ է պայմաններ ապահովել ժողովրդի կողմից քաղաքական կարգավիճակի ազատ որոշման համար՝ առանց ուժի ապօրինի կիրառման գործընթացի կամ միջազգային ընդհանուր իրավունքի նորմերի աղաղակող այլ խախտումների:

Համեմատելի սեցեսիաների և անհրաժեշտ փոփոխականների ընտրությունը: Ակնհայտ է, որ սեցեսիաների ուսումնասիրության ժամանակ համեմատելի սեցեսիաների ընտրության առանցքային գործոններն են, առաջին հերթին, ինքնորոշման կոռեկտության հատկանիշը, ապա՝ սեցեսիայի հաջողվածությունը: Հետևաբար, սեցեսիաների համեմատական վերլուծությունը պետք է բաղկացած լինի երկու փուլից՝ ինքնորոշման սեցեսիաների ընտրություն և այդ սեցեսիաների համապատասխան փոփոխականների արժեքների վերլուծություն՝ ընտրված սեցեսիաների հաջողվածության կամ ձախողման պատճառները որոշելու համար:

[47] International Covenant on Civil and Political Rights, https://undocs.org/en/A/RES/2200(XXI)
[48] Declaration on Principles 1970.

Առաջին փուլը թույլ է տալիս նեղացնել համեմատելի սեցեսիաների շրջանակը՝ դրանից բացառելով «սխալ» դեպքերը, որոնց վերլուծությունը կարող է հանգեցնել կեղծ եզրակացությունների: Այս փուլում միջազգային իրավունքի համապատասխան նորմերի հիման վրա ընտրված սեցեսիան ստուգվում է կոռեկտության երկու փոփոխականների միջոցով՝ քաղաքական կարգավիճակի սահմանման վերաբերյալ ինքնորոշվող ժողովրդի ազատ կամարտահայտում և նրա կողմից ռազմական ագրեսիայի բացակայություն: Քանի որ սեցեսիայի հաջողվածությունը ինքնորոշման նպատակադրումն է, ապա երկրորդ փուլի նպատակը պետք է լինի այն փոփոխականների սահմանումը, որոնց արժեքները (վիճակը) վճռորոշ է եղել ավելի հաջողված սեցեսիաների համար: Միաժամանակ, տարբեր մակարդակների սեցեսիաների հաջողվածության ուսումնասիրությունը կարող է առանձնացնել այն փոփոխականները, որոնք «պատասխանատու» են այս կամ այն մակարդակի համար: Վերջապես, երեք չափումներով (միջազգային իրավական, (աշխարհա)քաղաքական և էթնոմշակութային) խնդրի քննարկումը թույլ կտա առանձնացնել տվյալ խնդրի հետազոտության հիմնական պարամետրերը: Օրինակ, սեցեսիաների հաջողվածության ուսումնասիրության ժամանակ բավական է դիտարկել հետևյալ հիմնական փոփոխականները՝ հանրաքվե, Արդարադատության միջազգային դատարանի եզրակացություն (իրավական բաղադրիչ), բնակչության էթնիկ կազմը ինքնորոշման տարածքում, քաղաքակրթական արժեքների ընդհանրություն մետրոպոլիայի հետ (էթնոմշակութային բաղադրիչ), պատերազմ, փախստականներ (իրավական և քաղաքական բաղադրիչ), խաղաղապահներ, միջնորդներ, արտաքին միջազգային կառավարում, բանակցությունների հաջողություն, աշխարհաքաղաքական լարվածության առկայություն հակամարտության տարածաշրջանում (աշխարհա)քաղաքական բաղադրիչ):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Էթնոքաղաքական հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների համեմատական ուսումնասիրության մոդելների, այդ նպատակով օգտագործվող իրավական (աշխարհա)քաղաքական և էթնոմշակութային փոփոխականների վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. Այդ վերլուծության համար ավանդաբար կիրառվում են երկչափ մոդելներ՝ օգտագործելով քաղաքական և էթնոմշակութային փոփոխականները, սակայն դրանք արդյունավետ չեն սեցեսիաների՝ այդ գործընթացների առավել բարդ դեպքերի ուսումնասիրության համար, որոնց նպատակն ինքնորոշումն է:

2. Էթնոքաղաքական հակամարտությունների, դրանց կարգավորման գործընթացների և սեցեսիաների հաջողվածության գնահատման բարդությունը դրանց ուսումնասիրության միջոցով պահանջում է կիրառել համալիր և միջգիտակարգային մոտեցում, որը կարող է ապահովվել եռաչափ մոդելների կառուցման ժամանակ՝ օգտագործելով ինչպես քաղաքական և էթնոմշակութային, այնպես էլ իրավական փոփոխականները:

3. Իրավական բաղադրիչի՝ միջազգային իրավունքի նորմերի կիրառումն առանցքային նշանակություն ունի, քանի որ այն հակամարտությունները և դրանց կարգավորման գործընթացները բաժանում է երկու խմբի՝ ոչ միայն հակամարտության կողմերի նպատակադրման, այլ նաև սեցեսիայի կոռեկտության՝ ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի պահանջների բավարարման հատկանիշով: Հակամարտությունների և դրանց կարգավորման գործընթացների համեմատական ուսումնասիրությունը կոռեկտ է անցկացնել այդ երկու խմբերից յուրաքանչյուրի համար առանձին:

4. Եռաչափ միջգիտակարգային մոտեցման կիրառումը կարող է իրականացվել երեք փուլով: Առաջին փուլում առաջարկվում է որոշել հակամարտության բնույթը միջազգային իրավունքի նորմերի շրջանակներում ինքնորոշման պայմաններին համապատասխանելու տեսանկյունից և բաժանել այդ պայմաններին չհամապատասխանող դեպքերի խմբերի: Ուսումնասիրության արդյունքների հավաստիությունն ապահովելու և խեղաթյուրումները բացառելու նպատակով այդ խմբերից յուրաքանչյուրի ուսումնասիրությունը պետք է իրականացվի առանձին: Երկրորդ փուլում այդ պայմաններին համապատասխանության խմբից ընտրվում են սեցեսիաները, որոնց հետ համեմատվելու է հետազոտվող սեցեսիան: Այս սեցեսիաների ընտրության չափանիշների ընտրության հիմքը հետազոտության նպատակն է: Համեմատության համար ամենահարմարն այն սեցեսիաներն են, որոնք ունեն հնարավորինս շատ փոփոխականներ, որոնք համընկնում են հետազոտվող սեցեսիայի փոփոխականների հետ: Երրորդ փուլում կատարվում է կարգավորման գործընթացի ընթացքի վրա էական ազդեցություն ունեցող տարբերվող փոփոխականների վերլուծություն:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*